

ՆԵՐՍՈՒԴՈՒՐՍ
INSIDE OUT



CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

AHA COLLECTIVE

ԵՐԵՎԱՆ | YEREVAN
2021

ԴՈՒՐՍ
OUT

գայի խառնուրդ, մի իրադրություն և միաժամանակ մի իրադարձություն, որը նախանշում է, թե այդ տեղն ինչպես է բռնել պատմական պահի վերածվելու մի ընթացք:

Այդ իրադրություն-իրադարձությունն այլ բան չէ, քան համակարգային մի աղետ, փլուզումն այն փակ համակարգի, որով մարդկությունը, տարված ինքն իրենով (իր հույզերով ու ցանկություններով), իր տագնապը կամ ուրախությունը բնակեցնելով իր ստեղծած առարկաների ու մարմինների մեջ, կտրվել էր բնությունից՝ վերջինիցս խլելով ու իր գործունեությամբ աղտոտելով նորանոր տարածքներ: Մի իրադրություն-իրադարձություն, որում բնությունն ասես, մարդկության առջև ստեղծելով նորանոր (կլիմայական, տեխնոլոգիական, առողջապահական և այլն) խնդիրներ, ետ է պահանջում իր խախտված իրավունքներն ու ձգտում է վերականգնել տարաբնույթ փոխանակությունների հավասարակշռությունը:

Ինստալյացիայի դիտումից առաջացող այդ նախնական հարցը, սակայն, չի սահմանափակվում տեղանքին ուղղվելով, այլ ունի խորանալու և դեպի իրեն՝ դիտողին շրջվելու ուժ: Այդ ուժն ասես ծագել ու կուտակվել է Անուշ Ղուկասյանի ստեղծագործական խարխափումների միջից: Արվեստագետը, ասես հաղթահարելով իր մասնագիտության, արվեստագետի իր ձգտումների ու կնոջ իր ցանկությունների հետ կապված տարատեսակ երկվությունները, որոնք բնակվելով իր մեջ շարունակ հերթափոխում են միմյանց, ընդհուպ մոտեցել է մի տեսակ ընդհանրապես մարդկային ինքնությանն ուղղված մի հարցի: Ո՞վ եմ ես, ու ընդհանրապես ովքե՞ր են մարդիկ, կամ ովքե՞ր են իրենց միասնության մեջ այդ «երկրայինները», ինչպես Լատուրն է նրանց անվանում, և ո՞վ է նրանցից յուրաքանչյուրը, մարդ արարածն առանձին վերցրած: Ընդունա՞կ է նա արդյոք, իրացնելով իր ազատությունը, փոխելու ինքն իրեն, դառնալու մեկ ուրիշը, բայց այնպես, որ չխախտի ազգակցական կապն իր շրջապատի մարդկանց հետ, իր բնակված վայրի նկատմամբ լինի նրբազգաց ու հոգատար:

Նազարեթ Կարոյան
Արվեստի քննադատ

The choice of the location was very important. There was a landfill somewhere next to it and this was crucial. We did not see that part, but we were in all of it. An open-air landfill. With the feeling that we have come to a place that is associated with the bad, evil culture of the city, the installation ended up very touching for some reason, even though we had initially gone for the red clay soil.

Anush Ghukasyan

—

The pipes resemble some kind of open-mouthed creatures rising from the land itself as transmitters of information from the Earth's body, like speakers of the land's sound system, witnesses of the current environmental crisis. At the same time, the perfect union between the clay pit and clay artwork suggests a new form of engagement with nature, an engagement that is in full communion with the air and land.

Nairi Khatchadourian

—

One always tries to find and show pure things, set apart from the dirt. We chose the cleanest area from a district that is known for its landfill. If we had been too close to that landfill, I would have felt submerged.

Nelly Gevorgyan

—

A person lives in two worlds at the same time. On one hand, there is the outer world, the world of external reality, situations, circumstances, influences, and on the other hand, there is the inner world, our own, the world of our consciousness and thoughts. The inner world is a mirror reflecting the phenomena taking place in the outer world, which Anush Ghukasyan seeks to analyze, thus trying to avoid becoming a puppet of the surrounding reality, since she understands that these two realities, these two worlds, are completely independent and different from each other.

Vahram Galstyan